**Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**
**Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցում» վարկային ծրագրի վերաբերյալ**

**Վարկային համաձայնագրի անվանումը՝** Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև ստորագրվել է «Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցում» ծրագրի վարկային համաձայնագիր (Վարկ թիվ 3150-ARM(SF)
**Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 05.09.2014թ.
**Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 04.12.2014թ.
**Համաձայնագրով նախատեսված գումարը՝** 15,192,252.00 ՓՀԻ (փոխառության հատուկ իրավունք), որը տրամադրման պահին համարժեք է եղել 23,4 մլն ԱՄՆ դոլարի
**Համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝** 3.14 %
**Համաձայնագրի փակման ամսաթիվը՝** 30.06.2020թ.
**Համաձայնագրով նախատեսված վարկի մարման սկիզբը և ավարտը՝** 15.11.2019թ.-15.11.2039թ.

**Ենթավարկային համաձայնագրի անվանումը՝** Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման ծրագիր
**Ենթավարկային համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 02.02.2015թ.
**Ենթավարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 02.02.2015թ.
**Ենթավարկային համաձայնագրով վերավարկավորման նախատեսված գումարը՝** 23,4 մլն ԱՄՆ դոլար
**Ենթավարկային համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝** 3,14 %
**Ենթավարկային համաձայնագրի փակման ամսաթիվը՝** 30.06.2020թ.
**Ենթավարկային համաձայնագրով նախատեսված ենթավարկի մարման սկիզբը և ավարտը՝** 15.11.2019թ.-15.11.2039թ.

**Ըստ համաձայնագրի տրամադրված վարկային ծրագրի անվանումը՝** Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման ծրագիր 220 կՎ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցում

**Ծրագրի նպատակը՝** Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման շրջանակներում իրականացվում են 220 կՎ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցման աշխատանքները: Նախորդ տարիների ընթացքում Համաշխարհային բանկի աջակցությամբ 220 կՎ «Շինուհայր» ենթակայանը մասնակիորեն վերակառուցվել է: Ենթակայանում փոխարինվել են առաջնային լարման 220 կՎ լարման սարքվածքները, սակայն երկրորդային շղթաները, ռելեական պաշտպանության և ավտոմատիկայի

սարքվածքները հնացած են և չեն բավարարում հուսալի և անվտանգ էլեկտրաէներգիայի հաղորդման պահանջները:
«Ագարակ-2» ենթակայանում, որն անմիջականորեն կապված է իրանական 230 կՎ լարման ցանցի հետ, նախատեսվում է տեղադրել լրացուցիչ 220/110 կՎ ավտոտրանսֆորմատոր, որն էներգահամակարգի տվյալ հատվածում կապ կստեղծի 220 և 110 կՎ լարման էլեկտրահաղորդման գծերի միջև և հնարավորություն կտա 110 կՎ «Ագարակ-1» ենթակայանից սնվող սպառողներին ապահովել էլեկտրաէներգիայի պահուստային սնուցմամբ:

**Ակնկալվող արդյունքները՝** ենթակայանների արդիականացումն ու վերակառուցումը կնպաստի էներգետիկ անվտանգության և սպառողների էլեկտրամատակարարման հուսալիության բարձրացմանը, էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացմանը:

**Ծրագրի խորհրդատուի անվանումը՝** CESI S.p.A. & INCICO S.p.A ՀՁ. և Ամերիա ՓԲԸ ենթախորհրդատու
**Պայմանագրի անվանումը՝** Ծրագրի վերահսկման և կառավարման խորհրդատվական ծառայություններ 4 ենթակայանների համար («Ագարակ-2», «Շինուհայր», «Արարատ-2» և «Եղեգնաձոր» ԵԿ-ներ)

**Պայմանագրի գումարը՝** 1,089,969.91 ԱՄՆ դոլար
**Պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝** 20.11.2015թ.
**Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 20.11.2015թ.
**Պայմանագրի սկիզբը և ավարտը՝** 13.06.2016թ. (Պայմանագրի տևողությունը 4 ենթակայանների համար 57,5 ամիս), 220 կՎ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցման համար ավարտ է սահմանվել 26.10.2018թ.

**Ծրագրի կապալառուի անվանումը՝** Liaoning- EFACEC Electrical Equipment Co., LTD (LEEEC) & Northeast China International Electric Power Corporation (NEIE) համատեղ ձեռնարկություն
**Պայմանագրի անվանումը՝** 220կՎ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցում

**Պայմանագրի գումարը՝** 14,805,187.00 ԱՄՆ դոլար
**Պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝** 06.05.2016թ.
**Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 21.06.2016թ.
**Պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբը և ավարտը՝** 23.06.2016թ. մինչև 25.10.2018թ.

**Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները 01.01.2020թ. դրությամբ՝**
Խորհրդատվական ծառայություններ, այդ թվում՝

- *Վարկային միջոցների հաշվին - 542,778.60 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 136,689.80 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը – 679,468.40 ԱՄՆ դոլար*

Տոկոսների մարում՝ միայն վարկային միջոցների հաշվին - 712,088.20 ԱՄՆ դոլար

Շինարարական աշխատանքներ, այդ թվում՝

- *Վարկային միջոցների հաշվին - 2,131,481.20 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 467,845.90 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը – 2,599,327.10 ԱՄՆ դոլար*

Սարքեր և սարքավորումներ, այդ թվում՝

- *Վարկային միջոցների հաշվին - 9,434,013.30 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 1,705,766.10 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը – 11,139,779.40 ԱՄՆ դոլար*

Ընդհանուր կատարված աշխատանքները, այդ թվում՝

- *Վարկային միջոցների հաշվին - 12,820,361.30 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 2,310,301.80 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը – 15,130,663.10 ԱՄՆ դոլար*

**Ծրագրի շրջանակներում կատարված վճարումները 01.01.2020թ. դրությամբ՝**
Խորհրդատվական ծառայություններ, այդ թվում՝

- *Վարկային միջոցների հաշվին - 542,647.40 ԱՄՆ դոլար (ներառյալ միանվագ 250,000.00 ԱՄՆ դոլար կանխավճար)*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 137,353.30 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը – 680,000.70 ԱՄՆ դոլար*

Տոկոսների մարում՝ միայն վարկային միջոցների հաշվին - 712,088.20 ԱՄՆ դոլար

Շինարարական աշխատանքներ, այդ թվում՝

- *Վարկային միջոցների հաշվին - 2,397,740.30 ԱՄՆ դոլար, (ներառյալ 20% 980,290.00 ԱՄՆ դոլար կանխավճար)*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 641,178.40 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը – 3,038,918.70 ԱՄՆ դոլար*

Սարքեր և սարքավորումներ, այդ թվում՝

- *Վարկային միջոցների հաշվին – 7,634,696.40 ԱՄՆ դոլար, (ներառյալ 20% 1,980,747.40 ԱՄՆ դոլար կանխավճար)*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին – 1,703,358.90 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը – 9,338,055.30 ԱՄՆ դոլար*

Ընդհանուր կատարված վճարումները, այդ թվում՝

- *Վարկային միջոցների հաշվին – 11,287,172.20 ԱՄՆ դոլար, (ներառյալ 20% 3,211,037.40 ԱՄՆ դոլար կանխավճար)*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին – 2,481,890.60 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը – 13,769,062.80 ԱՄՆ դոլար*

**Ծրագրի ընթացիկ իրավիճակը՝** «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն, կարևորելով 220 կՎ «Շինուհայր» և «Ագարակ-2» ենթակայանների ռազմավարական նշանակությամբ պայմանավորված վերակառուցման աշխատանքների ավարտման հրատապությունը (դրանք են ապահովում ՀՀ հարավային շրջանի հուսալի և անվտանգ էլեկտրամատակարարումը, ինչպես նաև Հայաստանի և Իրանի էներգահամակարգերի միջև էլեկտրաէներգիայի փոխանակումները), 2019թ. դեկտեմբերի 17-ին լուծել է գլխավոր կապալառու՝ Liaoning- EFACEC Electrical Equipment Co., LTD (LEEEC) & Northeast China International Electric Power Corporation (NEIE) համատեղ ձեռնարկության հետ կնքված պայմանագիրը: «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն, ենթակայանների վերակառուցման աշխատանքներն ավարտին հասցնելու նպատակով, ներկայումս իրականացնում է հնարավոր կապալառուների (Ծրագրի շրջանակներում ենթակապալառուներ, միջազգային այլ վարկատու կազմակերպությունների աջակցությամբ ընկերությունում իրականացվող մյուս ենթակայանների վերակառուցման որակավորված կապալառուներ և ենթակապալառուներ) հետ բանակցությունների վարում:
Իրականացվում է վարկային համաձայնագրի փակման ժամկետի երկարացման գործընթաց՝ մինչև 2022թ. հունիսի 30-ը:

**Առկա խնդիրները՝** «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և Liaoning- EFACEC Electrical Equipment Co., LTD (LEEEC) & Northeast China International Electric Power Corporation (NEIE) համատեղ ձեռնարկության (այսուհետ՝ Գլխավոր կապալառու) միջև 2016թ. մայիսի 6-ին կնքված պայմանագրի համաձայն՝ 220 կՎ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցման ժամկետի ավարտ է սահմանվել 2018թ. հոկտեմբերի 25-ը: Գլխավոր կապալառուն պայմանագրով սահմանված ժամկետներում չի կատարել իր պայմանագրային պարտավորությունները՝ ամբողջությամբ չի ավարտել Պայմանագրով նախատեսված սարքերի և սարքավորումների մատակարարումները, վերակառուցման աշխատանքները: Գլխավոր կապալառուի կողմից ամբողջովին դադարեցվել են շինմոնտաժային աշխատանքները, 220 կՎ «Շինուհայր» ենթակայանում՝ 2019թ. հունվարի 8-ից, «Ագարակ-2» ենթակայանում՝ 2019թ. ապրիլի 10-ից:

Ծրագիրն իրականացվում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից: